

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

17 մարտի 2021 թ.
ք.Երևան

N 2-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 151-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 2021 թվականի մարտի 16-ի «Թիվ 15 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ Լ.Գրիգորյանի լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստի մասին» N 29, «Թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ Գ.Հովհաննիսյանի լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստի մասին» N 30 և «Թիվ 31 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ Ա. Ավետիսյանի լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստի մասին» N 31 արձանագրությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ նշանակելու մասին» թիվ 151-Ա որոշման.

- 1) 15-րդ կետից հանել «Գրիգորյան Լևոն Հենրիկի» բառերը,
- 2) 30-րդ կետից հանել «Հովհաննիսյան Գրիգոր Ֆիլիտոնի» բառերը,
- 3) 31-րդ կետից հանել «Ավետիսյան Արտակ Սուրիկի» բառերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան